

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶԻ ՂԱՓԱՆՑՅԱՆ

(ծննդյան 100-ամյակը)



Լրացավ ակնավոր սովետական լեզվաբան՝ ակադեմիկոս Գրիգոր Այվազի Ղափանցյանի ծննդյան 100-ամյակը: Սովետական Հայաստանում նրա շուրջ 40 տարվա գիտական-լեզվաբանական գործունեությունը արգասավորվել է մի շարք մեծարժեք ուսումնասիրություններով, որոնք նպաստել են ոչ միայն սովետական լեզվաբանության, այլև առհասարակ սովետական հայագիտության զարգացմանը և այսօր էլ պանդանում են իրենց գիտական արժեքը ինչպես լեզվաբանության, այնպես էլ հայ պատմագիտության համար:

Գ. Ղափանցյանը ծնվել է 1887 թ. փետրվարի 17-ին Աշտարակ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է գյուղի երկրասյան դպրոցում, ապա մեկնել է Պետերբուրգ (1899 թ.)՝ ուսույթ շարունակելու նպատակով: Սովորելով գիմնազիայում և ավարտելով այն 1908 թ.՝ շարունակել է ուսույթը Պետերբուրգի

համալսարանի արևելյան ֆակուլտետի հայ-վրացական բանասիրության քաժնում:

Վերադառնալով Հայաստան, Գ. Ղափանցյանը աշխատեց է անցել էլմիածնի նեմաբանում՝ դասավանդելով լեզվաբանական առարկաներ: Այստեղ էլ նա սկսել է իր գիտական գործունեությունը՝ արդեն 1914 թ. հրատարակելով «Աբարառ» հանդեսում «Հեռության մի քանի ճիշտակարաններ», «Լեզվաբանական դիպլոմի նաև և լեզու» հոդվածները: Երիտասարդ գիտնականի այդ հոդվածները ուշադրության արժանի են նրանով, որ նախանշում են նրա հետագայի ողջ գիտական գործունեության ճիմնական ուղղությունները, այն է՝ ընդհանուր լեզվաբանություն և հայոց լեզվի պատմության հնագույն շրջան ու հայերենի առևտրությունները կովկասյան և փոքրասիական լեզուների հետ:

1920 թ. Հայաստանում հաստատվում է սովետական իշխանությունը: Հիմնադրվում է Հայաստանի անդրանիկ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի պետական համալսարանը, և Գ. Ղափանցյանը հրավիրվում է համալսարան, որպես ընդհանուր լեզվաբանության և լեզվաբանական այլ առարկաների դասախոս: Այնտեղ, նոր հասարակարգի պայմաններում, նվիրվելով մանկավարժական և գիտական գործունեության, Գ. Ղափանցյանը հրատարակեց իր գիտական աշխատությունները: Որպես երիտասարդ համալսարանական, Գ. Ղափանցյանը դարձավ հանրապետության գիտական-ֆուլակական կարևորագույն իրադարձությունների ակտիվ մասնակիցը, դրսևորեց իրեն որպես հասարակական գործունեությանը նվիրված ֆուլակացի: 20-ական թվականներին նա գործուն մասնակցություն ունեցավ մեր ուղղագրության բարեփոխության գործին, հանդես եկավ այդ հարցին նվիրված հոդվածով, Հ. Անառյանի, Ստ. Մալխասյանի և Ա. Խաչատրյանի հետ կազմեց ուղղագրական բարեփոխությունների շառաչարկների համագրական աշխուսակը և այլն և այլն: Համալսարանում ընդհանուր լեզվաբանության ամբիոն ստեղծվելու օրվանից Գ. Ղափանցյանը դաժնավ այդ ամբիոնի վարիչը և ղեկավարեց այն մինչև 1953 թ.: 1943 թ. համալսարանում ստեղծվեց և Մատի անվան գիտական կարիքները, որի ղեկա-

վարությունը դարձյալ նրան հանձնվեց: Նրա գիտամանկավարժական ու հասարակական գործունեության բարձր գնահատականը եղավ համալսարանի պրոֆեսորի կոչումը, որը շնորհվեց նրան 1930 թ.: Այնուհետև նրան ստանց պաշտպանության շնորհվեց գիտությունների դոկտորի աստիճան, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործի կոչումը, իսկ 1943 թ., երբ հիմնադրվեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան, նա ընտրվեց ակադեմիայի հիմնադիր անդամ, դեկավարեց հասարակական գիտությունների բաժանմունքը որպես ակադեմիկոս Բարսեղյան: 1950 թ. լեզվաբանական բանավեճից հետո Գ. Վափանցյանը դարձավ ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի դիրեկտոր և այդ պաշտոնը վարեց մինչև իր կյանքի վերջը՝ 1957 թ.:

Գ. Ա. Վափանցյանը եղել է լայն գիտական հետազոտություններ թղթեցող գիտնական: Նա զբաղվել է տեսական լեզվաբանության հարցերով, հայոց լեզվի և հայ ժողովրդի կազմավորման (նախապատմության) հարցերով, հայոց ելզվի ու այլ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուների ծագումնաբանական կապերի և հարակից շատ այլ հարցերի ուսումնասիրությամբ: Գ. Վափանցյանը մեծ ավանդ է ներդրել այդ բոլոր պրոբլեմների ուսումնասիրության մեջ և փորձել է տալ դրանց ինքնատիպ գիտական լուծումը:

Գ. Վափանցյանը Պետերբուրգի համալսարանում սովորել է այնպիսի նշանավոր լեզվաբանների մոտ, ինչպիսիք են Բոդունը դե Կուրտենեն և Նո Մառը. բնականաբար, նրանց լեզվաբանական հայացքները չէին կարող իրենց կնիքը չբողոքել Գ. Վափանցյանի տեսության վրա: Նա խորապես ուսումնասիրել էր նաև դասական և իր ժամանակառից սովետական ու արտասահմանյան լեզվաբանական տեսությունները և ուղղությունները: Սակայն Գ. Վափանցյանը միշտ փնտրել է գիտական հետազոտություններում իր սեփական ուղին:

Սովետական կարգերի հաստատումից հետո սովետական գիտնականների առաջ կանգնեց մի շարքից կարևոր խնդիր՝ լեզվաբանությունը մարքսիստական փալիսոփայական հիմքերի վրա կանգնեցնելու խնդիրը: 20—30-ական թվականներին Գ. Վափանցյանն էլ լարված աշխատում է այդ ուղղությամբ և հրատարակում մի շարք հոդվածներ (« Հարեթական լեզվաբանությունն ու տեսությունը», «Լեզվի ու նրա դիալեկտիկական զարգացման շուրջը»), որոնք նվիրված էին լեզվի տեսական հարցերին: «Լեզվի և նրա դիալեկտիկական զարգացման շուրջը» հոդվածում Գ. Վափանցյանը այսպես է ներկայացնում իր խնդիրը. «...բնական է, որ մենք հավակնություն կարող ենք ունենալ այդ նոր մատերիալիստական լեզվաբանության առաջին փայլը միայն անելու, առաջին փորձերը միայն դնելու»¹: Գ. Վափանց-

յանը հիմնականում հասնում է իր նպատակին և 1939 թ. հրատարակում է «Ընդհանուր լեզվաբանություն» գիրքը, որտեղ ընթերցողին ներկայացնում է ամբողջական և ավարտուն լեզվաբանական տեսություն: Թեև Գ. Վափանցյանի տեսությունը զարգացել և ճշգրտվել է նրա ամբողջ գիտական գործունեության ընթացքում, սակայն ճշված գրքում ներկայացված տեսությունը իր առանցքային, ելակետային դրույթներով մնում է անփոփոխ:

Լեզվաբանական յուրաքանչյուր տեսության մեջ կենտրոնական տեղ է զբաղում լեզվի բրնույթի և էության հարցը, որի լուծմամբ պայմանավորվում է զգալի շահով այլ լեզվաբանական հարցերի լուծումը: «Ընդհանուր լեզվաբանություն» գրքում Գ. Վափանցյանը համարում է լեզուն հասարակական երևույթ, որը ծառայում է հասարակությանը որպես հաղորդակցման միջոց: Նա դիտում է լեզուն որպես կայուն համակարգ և միաժամանակ որպես դինամիկ, ասրգացող երևույթ: Լեզուն պետք է լինի կայուն, որպեսզի կարողանա ապահովել հաղորդակցումը հասարակության մեջ տարբեր սերունդների միջև: Լեզուն զարգանում, փոփոխվում է հասարակության հետ, սակայն նրա զարգացումը տեղի է ունենում երկարատև ժամանակաշրջանում: Որակական փոփոխությունները (անցումները) լեզվում չեն կատարվում քաիչների միջոցով, և դա բույլ չի տալիս դիտել հասարակության և լեզվի զարգացման կապը որպես մեխանիկական, անմիջական կապ: Սրա վրա դրսևորումը մենք տեսնում ենք հեղափոխական հապարակական նեղաշրջումներում, որոնց հետևանքով, սակայն, լեզուն չի փոխում իր որակը: Գ. Վափանցյանը այստեղ բերում է սովետական միության լեզուների օրինակը, որոնք սոցիալիստական հեղափոխությունից հետո չփոխեցին իրենց որակը:

Գ. Վափանցյանը առանձնացնում է լեզվի հետևյալ գործառույթները՝ 1) լեզուն հաղորդակցման միջոց է, 2) լեզուն մտածողության ձևավորման միջոց է և 3) լեզուն մտածողության արտահայտության միջոց է: Գ. Վափանցյանը միշտ շեշտում է լեզվի և մտածողության միասնությունը և սրանց ծագումն ու զարգացումը դիտարկում է որպես միասնական գործընթաց:

Կարևոր է նշել, որ Գ. Վափանցյանը մոռնել է հայ լեզվաբանության մեջ մի շարք լեզվաբանական գաղափարներ և տեսակետներ: Իրանց թվին են պատկանում լեզվի և խոսքի տարբերակումը և հակադրումը: Ըստ Գ. Վափանցյանի լեզուն հասարակական երևույթ է. խոսքը՝ նրա դրսևորումը (անճատական օգտագործումը): Նա զգուշացնում է այդ երևույթ-

ներկայական զարգացման շուրջը, «Նոր ուղի», 1931, գիրք 3, էջ 140:

¹ Գ. Ա. Վափանցյան, Լեզվի ու նրա դիա-

ները շփոթելու անբույլատրելիության մասին:

Գ. Կափանցյանը տարբերակում է նաև համաժամանակյա և տարժամանակյա լեզվաբանություն: Համաժամանակյա լեզվաբանությունը նա բաժանում է սեռական և գործնական լեզվաբանության, իսկ տարժամանակյան՝ պատասխան (լեզվի գրային պատմության ուսումնասիրությունը) և պատմահամեմատական (լեզվի նախագրային պատմության ուսումնասիրությունը):

Գ. Կափանցյանը՝ հենվելով բազմաթիվ ու բազմաբնույթ լեզուներից բազմ հարուստ փաստական նյութի վրա, իր «Ընդհանուր լեզվաբանության» աշխատության մեջ տալիս է լեզվի կառուցվածքի և կառուցվածքային սիմպոնիների խորը և բազմակողմանի բնութագրություն: Նա էստոնացի է անուն լեզվի սյուրբական սիմպոնիները՝ հեշյունները, ձևայինները, բաները և նախադասություններն ու հասկանում է այդ սիմպոնիների համակողմանի գիտական բնութագրությանը, բացառապես դրանցից յուրաքանչյուրի դերն ու կոչությունը: Նշենք, որ հեշյունի և ձևային գաղափարներն էլ հայ լեզվաբանության մեջ մտնել է Գ. Կափանցյանը:

Գ. Կափանցյանի «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատությունը արժեքավոր ներդրում էր սովետական լեզվաբանության մեջ: Այստեղ ընդհանրացված և ամփոփված են ոչ սիայն սովետական, այլև արտասահմանյան լեզվաբանության նվաճումները, սարսիստական փիլիսոփայության հիման վրա լուծված են սիլաբի լեզվաբանական տեսական պրոբլեմներ: Իրական մտքի խորությամբ, լեզվական նյութի ընդգրկման բազմակողմանիությամբ, դրանց վերլուծության ու բնութագրման գիտական մակարդակով այս աշխատությունը մեկն էր 30-ական թվականների սովետական լեզվաբանության լավագույն գրքերից և ներկայացնում էր այն ժամանակվա լեզվաբանական մտքի զարգացման բարձրագույն աստիճանը:

Գ. Կափանցյանը իր աշխատություններում միշտ ակտիվ վերաբերմունք է ցուցաբերել դեպի տարբեր լեզվաբանական ուղղություններ և տեսություններ: Նա ֆենադատաբար յուրացրել էր դրանք և օգտագործել իր աշխատություններում դրանց նվաճումները: Առանձնապես մեծ էր Գ. Կափանցյանի հետաբերությունը չեզոքի ն. Մառի տեսությունը: Դա բացատրվում է մի կողմից նրանով, որ նա աշակերտել էր ն. Մառին Պետերբուրգի համալսարանում և համարում էր ն. Մառին իր ուսուցիչը, մյուս կողմից նրանով, որ 20-ական թվականների երկրորդ կեսից սկսած ն. Մառի տեսությունը մեծ տարածում է ստանում սովետական լեզվաբանության մեջ և նույնիսկ ձեռք էր գտնում միակ պաշտոնական տեսությունը: Ն. Մառի տեսության վերլուծությանն ու բնութագրմանն է նվիրել Գ. Կափանցյանը սովետական կարգերի հաստատումից հետո

լույս տեսած իր առաջին ծավալուն տեսական հոդվածը («Հարեթական լեզվաբանությունն ու տեսությունը»): Հետագայում նա իր բոլոր աշխատություններում էլ այս կամ այն չափով անդրադարձել է ն. Մառի տեսությանը: Գ. Կափանցյանի գիտական գործունեության մեջ կարելի է առանձնացնել երեք փուլ, որոնցում վերաբերմունքը դեպի ն. Մառի տեսությունը սարբեր է եղել: 1) Իրական գործունեության սկզբից մինչև 1930 թ., երբ նա գրեթե ամբողջությամբ ընդունում է ն. Մառի «Հարեթական տեսությունը» և չի ընդունում «լեզվի նոր ուսմունքը»: Այդ ժամանակ նա ընդունում է նաև ն. Մառի ուսմունքը հայոց լեզվի մասին (ներառյալ նաև հայոց երկու դաստիարակիչ լեզուների գոյության դրույթը) և փորձում է իր հետազոտություններում օգտագործել «հրնչաբանական» մեթոդը: 2) 1930 թ. սինչև 1950 թ., երբ նա ֆենադատում է «լեզվի նոր ուսմունքի» հիմնադրույթները, վերաճալում է հայոց լեզվի կազմավորման տեսությանը: 3) 1950 թ. հետո, երբ Գ. Կափանցյանը ֆենադատում է չի ընդունում ն. Մառի տեսության բոլոր հիմնադրույթները (և՛ «Հարեթականության», և՛ «լեզվի նոր ուսմունքի»), ընդունելով նրա միայն մի դրույթը լեզվի խոնկվածության բնույթի մասին, թեև այս հարցում էլ նա սկսում է հարել ենթաշեռտի (տարատրտ) տեսությանը:

Գ. Կափանցյանը իր «Ն. Մառի որոշ ընդհանուր լեզվաբանական դրույթների մասին» հոդվածով մասնակից 1950 թվականին «Պրավդա» թերթի էջերում ծավալված լեզվաբանական քննարկներին: Նրա հոդվածը սովետականներից մեկն էր, ուղղված էր ն. Մառի «լեզվի նոր ուսմունքի» դեմ և հիմնականում արտացոլում էր լեզվաբանական այն հայացքները, որոնք ընդհանուր հանաչում ստացան քննարկներից հետո:

Ինչպես վերև ասացինք, Գ. Կափանցյանի գիտական հետազոտություններն ընթացել են մի կողմից՝ տեսական լեզվաբանության պրոբլեմատիկայի, մյուս կողմից՝ հայերենի նախապատմության ու դրա հետ կապված՝ հին մեռած լեզուների (ուրարտերենի, խեթերենի, խուրիերենի և այլն) և կովկասյան լեզուների ուսումնասիրության ուղղությամբ, ըստ որում այս երկրորդ ուղղությամբ կատարված հետազոտությունների գլխավոր նպատակն է եղել հայերենի ու դրանց առնչությունների բացահայտումը: Այս կարգի նրա առաջին ծավալուն հետազոտությունն է «Cetto-armenica» գիրքը, որի մեջ հեղինակը ֆենության է առնում խեթերենի և հայերենի միջև եղած ընդհանրությունները (արմատներ, ածանցներ, ֆերականական վերջավորություններ):

Ծարունակելով իր հետազոտություններն այդ ուղղությամբ՝ նա հետագայում հրատարակեց մի շարք աշխատություններ, որոնց մեջ ֆենության են առնվում ուրարտերենի ու հա-

յերենի, հայերենի ու խեբրեանի, հայերենի ու կովկասյան լեզուների, հայերենի ու հնդեվրոպական լեզուների «ձագումնաբանական» ընդհանուրությունները: Այդ կարգի ուսումնասիրություններից առավել կարևորներն են «Ուրարտի պատմությունը», «Հայաստան՝ հայերի բնօրրան», «Հայոց լեզվի պատմություն» աշխատությունները:

Գ. Ղափանցյանի տեսական դրույրը լեզուների խտնվածքային բնույթի մասին իր արտահայտությունն է գտնում հայոց լեզվի կազմավորմանը և նրա ցեղակցական կապերին նվիրված բոլոր ուսումնասիրություններում: Նա կարծիքով, էրե երկու լեզուների միջև գտնում են լեզվական այնպիսի բնօրրանություններ, որոնք գոյացել են տվյալ ժողովրդի (Լրնուի) կազմավորումից, հետևաբար և՛ էթնիկական լեզվի գոյացումից առաջ, ապա այդ լեզուներ խաչավորված լեզուներ են: Այս ընդհանուր սկզբունքը տարանջով հայերենի վրա և հայերենի ձագումնաբանական բաղկացությունը բնութագրելով, նա գտնում էր, որ հայերենը ցեղակից է մի կողմից լսբական (խեբրեան, լուվիեան, պալայեան, իկիեան և այլն) լեզուներին, մյուս կողմից՝ կովկասյան (առանձնապես՝ լազա-մեգրելական և վրացերեն) լեզուներին և ուրարտերենին, և վերջապես, երրորդ կողմից՝ հնդեվրոպական լեզուներին: Քեև այս տեսակետը չի բնորոշում ժամանակակից հայագիտության կողմից, դա չի նվազեցնում Գ. Ղափանցյանի նշված աշխատությունների արժեքը: Նա բացահայտում է դրանցում հայերենի և խեբրեանի, հայերենի և լազա-մեգրելական լեզուների, հայերենի և ուրարտերենի միջև եղած բնօրրանուր տարրերը՝ ենթարկելով դրանք համակարգային բնության ու վերլուծելով այդ լեզուների հրնշյունական, բառային, բառակազմական ու բերականական համակարգերը: Այս տեսակետից նա դրակատերեն առանձնաբան է նախորդ հետազոտողներից, որոնք հայերենի և հիշյալ լեզուների հետազոտությունները մեծ մասամբ հանգեցրել են լոկ բառային փոխառությունների վերհամաման: Գ. Ղափանցյանի աշխատությունները, որոնք հիմնված են բազմակողմանի բնությունների վրա և մեթոդական տեսակետից նորություն էին ներկայացնում հայերենագիտության մեջ, խոշոր ներդրում են հայերենի և փոքրասիական, ինչպես և կովկասյան լեզուների ուսումնասիրության բնագավառում և պատանական չէ, որ այդ հետազոտությունները իրենց հետագա զարգացումը ստացան ժամանակակից հայերենագիտության մեջ:

Գ. Ղափանցյանի հիշյալ աշխատությունները կրում են նաև պատմագիտական բնույթ: Հենվելով լեզվական նյութի գիտական վերլուծության վրա, նա ձգտում է լուսաբանել հայ ժողովրդի նախապատմության և հայ Լրնուի կազմավորման գործընթացում զանազան արյունակից և ոչ արյունակից ցեղերի ու ցեղա-

խմբերի դերը: Այս տեսակետից առավել մեծ արժեք են ներկայացնում «Ուրարտի պատմությունը» և «Հայաստան՝ հայերի բնօրրան» աշխատությունները: Հատկապես այդ երկրորդ աշխատության մեջ Գ. Ղափանցյանը հիմնականում կարողացել է լուծել Հայաստանի տեղագրության որոշման, հայ ժողովրդի կազմավորման մեջ հայասցիների խաղաղացած դերի և բազմաթիվ այլ հարցեր և դրանով իսկ մեծապես նպաստել հայերի նախապատմության լուսաբանությանը:

Յոսելով Գ. Ղափանցյանի պատմալեզվաբանական հետազոտությունների մասին՝ անհրաժեշտ է առանձնապես շեշտել Հայաստանի և նրան հարող վայրերի տեղանունների նրկատմամբ նրա ցուցաբերած հատուկ ուշադրությունն ու դրանց գիտական ուսումնասիրությունը: Նա, նիշտ կերպով գտնելով, որ աշխարհագրական անունների մի զգալի մասը գալիս է հնագույն շրջանից և վկայում է Հայաստանի տարածքում սպրած նախահայկական շրջանի ցեղերի ու նրանց լեզուների մասին, իր պատմալեզվաբանական աշխատություններում հատուկ բնության առարկա է դարձնում դրանք: Այս տեսակետից զննատելով նրա ուսումնասիրությունները՝ կարելի է ասել, որ հայագիտության մեջ Գ. Ղափանցյանը տեղանվանաբանության հիմնադիրներից մեկն է, որը նիշտ կերպով ստուգարան է Հայաստանի բազմաթիվ տեղանուններ:

Իացի բվարկված աշխատություններից, Գ. Ղափանցյանը ունի նաև մի շարք հետազոտություններ, որոնք նվիրված են հին հայերի և ուրիշ հին ժողովուրդների զիցարանությանը և, առհասարակ, պաշտամունքային խնդիրների բնությանը: Այս տեսակետից ուշագրավ են նրա «Արա Գեղեցիկի պաշտամունքը», «Փոքրասիական (ասիական) աստվածները հայոց մեջ», «Հայաստանի լեռների» փարակորդների մասին» և այլն: Այս աշխատությունների մեջ նա համեմատական մեթոդով ուսումնասիրում է հին հայկական զիցարանությունը, պաշտամունքային պատկերացումներն ուրիշ հին ժողովրդների (խեբրեան, խուդիական, հին հուսեական, սլավոնական և այլն) զիցարանությունների հետ ունեցած ընդհանրությունները բացահայտելով:

Գ. Ղափանցյանը նպաստել է հայագիտության զարգացմանը ոչ միայն իր գիտական այլ նաև մանկավարժական գործունեությամբ: Երեք տասնամյակից ավելի նա դասավանդել է Երևանի պետական համալսարանում և պատրաստել ընդհանուր լեզվաբանության երիտասարդ մասնագետներ, որոնք նրա հետ աշխատելով ու հասունանալով՝ առաջ մղեցին սովետահայ լեզվաբանությունը, իսկ նրա մահվանից հետո փոխարինեցին նրան՝ շարունակելով իրենց արդյունավետ գործունեությունը լեզվաբանության բնագավառում:

Ռ. Է. ԱՂԱՅԱՆ